

3. ԻՐԱԶԵԿ

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ԱՆՑԵԱԼԻՅ

(« ՇՏԵՄԱՐԱՆ » , ԹԵՐԹ ԿԱԼԿԱԹԱՅԻ)

Ա.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Ինչպէս գիտենք, Հայոց անդրանիկ լրագիրը ծնունդ առաւ հընդ-
կահայ գաղութում 1794 թւին: Մադրասի «Ազդարար» ամսագիրն էր
դա, չիրագրեցի Շմաւոնեան քահանայի փայտաշին հոգեղաւակը:
Բայց, դժբախտաբար, երկարատեւ կեանք չունեցաւ նա — հազիւ
մէկուկէս տարի — տալով ընդամենը 18 ամսատեւոր:

Սակայն, հայ լրագրութիւնը «Ազդարար»-ի հետ միասին չմե-
ռաւ Հնդկահայութեան մէջ, այլ շարունակեց ապրիլ երեք քառորդ
դարի չափ, մինչեւ ԺԹ. դարի 60-ական թւականները, տալով մի
շարք ներկայացուցիչներ զանազան ժամանակներում եւ զանազան
վայրերում, որոնցից մի երկուսը բաւական նշանաւոր: Եւ հնդկահա-
յոց վերջին լրագիրը եղաւ «Շրբայրասէր»-ը, որ հրատարակուեց էր
Կարկաթայում 1862 - 63-ին:

Բայց իսկապէս որ մի շատ դարձանալի ու գեղեցիկ յատկութիւն
ունի հայ ժողովուրդը եւ, յատկապէս՝ գաղթական հայը, դիտած ու
հաստատած բազմաթիւ դարերի ընթացքում ու բազմաթիւ փաստե-
րով: Ուր որ ընկնում է նա՝ շուտով մի նոր կեանք է ստեղծում իր
շուրջը — պերճութեան ու լոյսի կեանք: Դիւրորէի ասածին պէս՝
ուր որ հայոց գաղթականութիւն հաստատուի, առաջին հերթին կը
հիմնի մի եկեղեցի, մի դպրոց, մի գրադատուն եւ մի լրագիր:

Հոգակաւոր արեւելագէտի այդ խօսքը թերեւս ամենից աւելի
ճիշդ է հնդկահայի նկատմամբ, որի փառաւոր անցեալը դրա պեր-
ճախօս վկայութիւնն է: Չնայած իր շատ աննշան քանակին՝ հնդկա-
հայ գաղութը իր պատմութեան ընթացքում պայծառ կերպով փայ-
լել է Դիւրորէի մատնանշած մարդերում: Նա ո՛չ միայն մէկ հոյա-
կապ դործունէութիւն է հրապարակ բերել եկեղեցասիրութեան, բա-
րեգործութեան, տարագրութեան, գրի ու գրականութեան, թատրո-
նի, մի խօսքով՝ ազգասիրութեան ու ազգաշինութեան ասպարէզնե-

բում, այլ եւ իր փոքրիկ տեղովը երկար ժամանակ առաջնակարգ դեր է խաղացել բովանդակ հայ կեանքում:

Հնդկահայ գաղութի աղգային ու քաղաքակրթական արժէքը լաւ բացատրու համար, բաւական է ասել, որ, օրինակ, անցեալ դարի կէսերին հնդկահայոց ամբողջ թիւը 7.000-ից չէր անցնում, այն էլ ցրւած անծայրածիր տարածութեան վրա, բուն Հնդկաստանից սկըսած մինչեւ Ծիլիպպեան կղզիները եւ աւելի հեռուները: Սակայն, չնայած այդ աննշան քանակութեան՝ նրանք ունէին իրենց բազմահարուստ ու պայծառ եկեղեցիների հետ միասին, նաեւ բաւական ծաղկած դպրոցներ, տպարաններ, մամուլ ու մշակութային այլ հիմնարկութիւններ:

Մի աւելի ցայտուն փաստ եւս հնդկահայի այդ սքանչելի նկարագրի: Ահաւասիկ մի ոչինչ Սինդապուր — ոչինչ՝ հայութեան թւի տեսակէտից — ուր ընդամենը 50 հայ կար — 30 տղամարդ, 7 կին, 5 տղայ եւ 8 աղջիկ: Բայց այս սղտիկ քանակը շատ խոշոր մեծութիւն էր իր բարոյական կարողութիւններովն ու աղգասիրական տենչերովը:

1849 թւին նա հիմնում է իր սեփական լրագիրը՝ «Ուսումնասէր», ունենալով, ոչ աւելի եւ ոչ պակաս, 7 բաժանորդ: Սա հէքեաթ չէր, այլ պատմական ստույգ ճշմարտութիւն: Յաջորդ տարին բաժանորդների թիւը հասնում է իր «գաղաթնակէտին» — ընդամենը 30: Բայց չնայած այս փոքր թւի եւ հրատարակութեան հետ կապւած բազմադան դժարութիւնների, թերթը չորս տարի անընդհատ շարունակում է իր գոյութիւնը: *)

Ինչո՞վ բացատրել այդ դարմանալի երեւոյթը: Պատճառները մէկից աւելի են, բայց նրանց թւում գլխաւոր տեղը բռնում է յատկապէս մինը — նախկին հնդկահայի մէկ զեղեցիկ յատկութիւնը: Այն է՝ լուսաւորել եւ լուսաւորել իր աղգակիցներին:

Այդ զօրեղ տենչանքն էր ահա, որ հարկադրում էր հնդկահայերին գուրգուրանքով փարելու այս բոլոր գործօններուն — դպրոց, եկեղեցի, տպարան, լրագիր, եւն. — որոնք իւրաքանչիւր ժողովրդի համար լոյսի ու լուսաւորութեան աղբիւրներ են հանդիսանում: Եւ այդ գործօնների շարքում էլ՝ փարելու յատկապէս գրին ու տպագրութեան, որոնց զերը ժողովրդական լայն զանգւածները լուսաւորելու գործում աւելի քան մեծ է:

*) Հ. Գ. Գալեմբարեան՝ «Պատմութիւն Հայ կրթութեան» ի սկզբանէ մինչեւ մեր ժամանակը, Վիեննա, 1893 թ., էջ 113:

Ահաւաստիկ դիտաւոր բանալին — մեր կարծիքով — այն իրողութեան, որ փոքրիկ հնդկահայութիւնը իր ծոցում ծնունդ է տւել ու սնուցել մէկ տասնեակից աւելի տալարանների, իսկ սրանք էլ իրենց հերթին՝ 200-ից աւելի գրքերի ու 10 - 11 լրագիրների:

Մի շատ խոշոր, անդհահատելի ծառայութիւն է սա մեր ժողովրդին, մասնաւորապէս մեր գրականութեան, այն էլ մի փոքրաթիւ գաղութի կողմից, որի հանդէպ միայն համակրութեան ջերմ զգացմունք կարելի է ունենալ:

Բայց մեր երկնակամարի ներքոյ ոչինչ կայ մնայուն, յաւիտենական: Մակընթացութեանը հետեւում է տեղատուութիւնը, բարձրացումին՝ անկումը: Հնդկահայ կեանքն եւս, իր ամբողջ առումով, դժբախտաբար, անվերջ էի մնում իր ծաղկեալ վիճակում: Նրա մակընթացութեանն էլ չուտով հետեւում է տեղատուութիւնը: Տնտեսական անկումին յաջորդում է մէկ ընդհանուր անկումն բովանդակ կեանքի, որի մէջ էլ ամենից աւելի՝ մշակութային կեանքի: Դպրոց, տալարան, գիրք, լրագիր կամաց - կամաց քչում են ասպարէզից, եւ նրանց տեղ մնում է մի տխուր դատարկութիւն:

Անցնելով «Շտեմարան» թերթին, պիտի ասենք, որ հնդկահայ լրագրութեան բազմաշնչամ ընտանիքում յամենայն դէպս պատւաւոր տեղի էից մէկը նրան է պատկանում: Բայց, դժբախտաբար, նրա մասին ոչ միայն սովորական գրագէտների շրջանում, այլ անգամ մեր լրագրութեան պատմութեան էջերում չատ քիչ բան է յայտնի, եթէ չասենք՝ ոչինչ յայտնի է:

Մինչեւ այսօր մեզ յայտնի չէր, օրինակի համար, ո՛չ միայն նրա բովանդակութիւնը եւ հրատարակութեան մի շարք պայմանները, այլ մենք չգիտէինք նոյն իսկ, թէ ո՞վ է եղել նրա խմբագիրը, ի՞նչ թերթ է նա՝ ամսագի՞ր, շաբաթաթի՞ւրթ թէ՞ օրաթերթ, երբ է սկսւել, ե՞րբ է դադարել, եւն, եւն:

Այսպէս, օրինակ, Հ. Գալէմքեարեանը իր «Հայոց Լրագրութեան Պատմութիւնը» նշանաւոր աշխատութեան մէջ յիշատակելով «Շտեմարան»-ի անունը, ո՛չ մի ծանօթութիւն չի տալիս մեզ: Միմիայն սկզբնաւորութեան թւականն է տալիս, այն էլ ենթադրաբար ու սրտաւ, հիմնւելով Սինգապուրի վերոյիշեալ «Ուսումնասէր» թերթի հաղորդած սխալ Ռեդեկլիթեան վրա: «Դարուս — այսինքն՝ ԺԹ. դարի — սկզբին եղած է՝ 1800-ին եւ 1810-ին մէջերը» — գրում է նա:

Գ. Լեւոնեանը իր «Հայոց պարբերական մամուլը» *) երկասիրութեան մէջ գրում է. «Շտեմարան», 183 - 183. ներկայ դարու սկզբներին Հնդկաստանում եւս ունեցել ենք մի հրատարակութիւն

«Շտեմարան» անունով: Շատ ցանցառ են «Շտեմարան»-ի մասին մեր ունեցած ստույգ տեղեկութիւնները: Աննշան կեանքով, աննշան էլ մընացել է «Շտեմարան»-ը մեր պատմութեան մէջ »:

Բայց յետոյ, նոյն գրքի «Լրացումն» բաժնի մէջ, օգտուելով «Հանդէս Ամսօրեայ»-ի մէկ տեղեկութիւնից (1894 թ., էջ 364), Գ. Լեւոնեանը շտապում է աւելացնել. «*«Շտեմարան» սկսեց 1821-ին, խմբագրութեամբ Շիրազեցի տիրացու Մարտիրոս Մկրտչեանի: Ի տպարանի «Օճանասիւնեան Ժողովոյն», յընծայեալ ի Պ. Պօղոսէ Յորդանեանց: Դիրքը ութածալ է»:*

Հ. Ղազիկեանը իր «Մատենադրութիւն» պատկանելի աշխատութեան մէջ **) «Շտեմարան»-ը յիշատակում է որպէս գիրք, այլ ոչ թէ լրագիր, թւականն էլ դնելով 1818, այն էլ հարցականով:

Վիեննայի Միաբաններից Հ. Ռ. Կարապետեանը, որ հրատարակել է հայերէն լրագիրների լիակատար ցուցակը ***) , «Շտեմարան»-ի մասին կրկին ոչ մի տեղեկութիւն չտալով, միմիայն նրա սկզբնաւորութեան թւականն է հաղորդում՝ 1830 թ., այն էլ հարցականով եւ նոյնպէս սխալ:

Մենք դիտմամբ ամբողջութեամբ մէջ բերինք մեր գրականութեան մէջ — որքան մեղ յայտնի է — «Շտեմարան»-ի մասին եղած բոլոր տեղեկութիւնները, որպէսզի ցոյց տանք թէ՛ որքան աղքատիկ են նրանք ու միեւնոյն ժամանակ՝ հակասական ու սխալ:

Քիչ — շատ ընդարձակ ծանօթութիւն «Շտեմարան»-ի մասին — բայց կրկին աղքատիկ — հաղորդում է Մ. Թաղիադեանի «Աղդասէր Արարատեան» թերթը իր վերջին Nոմ (Կալկաթա, 1851 թ., № 66, 15 փետր.):

Դառնացած սրտով գումարելով իր սիրած լրագրի մահը՝ հասարակութեան անտարբերութեան երեսից, Թաղիադեանը, ի միջի այլոց, չէշտում է, որ հասարակութեան նոյն ապերախտ վերաբերմունքի պատճառով փակեցին իրենից առաջ եղած հնդկահայ թերթերը եւս, ինչպէս են՝ Մաղրասի «Բանասէր»-ն ու «Աղդարար»-ը (երկրորդ

*) Գ. Լեւոնեան՝ «Հայոց պարբերական մամուլը» սկզբից մինչեւ մեր օրերը (1794 — 1894), Ալեքսանդրապոլ, 1895 թ.:

Իր վերջին գրքում, սակայն՝ «Հայոց պարբերական մամուլը» Լեւոնեանը «Շտեմարան»-ի ժամանակը նշանակում է 1821 — 29: ԽՄԲ.

**) Հ. Ղազիկեան՝ «Հայկ. նոր Մատենագրութիւն եւ Հանրագիտարան Հայկական կեանքի», Վենետիկ, 1909 — 1912 թ.:

***) Հ. Ռ. Կարապետեան՝ «Լիակատար ցուցակ հայերէն լրագիրներու», 1794 — 1921, Վիեննա, 1924 թ.:

«Ազգարար»), Բոմբէյի «Օճանափոխան»-ը եւ Կալկաթայի «Շտեմարան»-ը :

Այո, Թաղիաղեանը իրաւունք ունէր այդպէս վշտագին բողոքելու հասարակութեան անտարբերութեան դէմ, որովհետեւ նա, ինչպէս եւ իր մատնանշած թերթերը, հնդկահայութեան մայրամուտին էին դուռը դնել: Իր ոսկեղարկց դէպի անկումն զահալիփող զաղութը այլեւս ի վիճակի չէր — աւելի հոգեբանօրէն, քան իր տնտեսական զրութեամբը — իր մեկեկնասի նախկին գործունէութիւնը չարունակելու :

Բայց աւելի լաւ է՝ բերենք Թաղիաղեանի վկայութիւնը իր իսկ բերանով .

« Եղեն այո՛, լրագիրք ազգի մերոյ ի Հնդկիս, որպիսի էին Ազդարար եւ Բանասէրն Մաղրասայ, Օնանսփոխան լրագիրն Բոմբայոյ, Շտեմարան Կալկաթայ. այլ ոչ ոք ի նոցանէ հաս ի հասակ մանկութեան » :

«Ազգասէր Արարատեան»-ի այդ տեղեկութիւնները հաղորդում է նաեւ Սինդապուրի «Ուսումնասէր» թերթը եւ համարեա նոյն բաներով. « Եղեն արդարեւ — զրում է նա — լրագիրք ազգի մերոյ ի Հնդկիս, այսինքն Ազդարարն, Օնանսփոխանն եւ Շտեմարանն, որք մեռեալ զաղարեցան ի մանկական հասակի. բայց այնքիկ քառասուն եւ յիսուն ամօք յառաջ քան զԱզգասէրն էին : » (1851 թ., № 43, Գալէմբ., էջ 196) :

Թէ «Ազգասէր Արարատեան»-ի եւ թէ «Ուսումնասէր»-ի վերոյիշեալ տեղեկութիւնները մէջբերելով, Հ. Գալէմբարեանը ուրախացած սրտով բացականչում է. « Մենք դո՛ւ ենք առ այժմ այսչափն ալ իմանալով » : Նշանակում է, թէ ուրեմն ծանօթութիւնների ի՛նչպիսի սով է տիրում մեր մամուլում «Շտեմարան»-ի, ինչպէս եւ նրա հետ յիշեալ միւս թերթերի մասին, որ մեր զիտնական վարդապետը, ձեռք բերելով այդչափ համեստ տեղեկութիւններ, ցնծութեամբ բացականչում է. « Այսչափն իմանալով ալ մենք դո՛ւ ենք » :

*) Պարզ է, ուրեմն, որ «Ուսումնասէր»-ն եւս հարկաւոր չափով ծանօթ չի եղի «Շտեմարան»-ին եւ չի իմացել — ինչպէս քիչ յետոյ կը տեսնենք — նրա հրատարակութեան ֆիշը ժամանակը: Հակառակ դէպքում՝ չէր գրի. «Ազգասէր»-ից — խօսքը Մ. Թաղիաղեանի «Ազգասէր» քերքի մասին է — քառասուն եւ յիսուն տարի առաջ: Ուրեմն, ըստ «Ուսումնասէր»-ի, «Շտեմարան»-ը սկսած պիտի լինի 1800 — 1810 — ինչպէս որ նրա խօսքերից սխալմամբ եզրակացրի է Հ. Գալէմբարեանը — որովհետեւ յայտնի է, որ «Ազգասէր»-ը հրատարակւել է 1845 թ. Օգոստ. 16-ից մինչեւ 1848 թ. Յունիս 24-ը, տալով ընդամենը 141 քիւ :

Պէտք է ենթադրել, որ այդ բացարձակ անծանօթութիւնն առաջանում է նրանից, որ «Շտեմարան»-ի օրինակներէից չկայ եւ չի պահւած եւ ոչ մի տեղ: Հակառակ դէպքում անհաւանական է, որ Հ. Հ. Գալէմբերեանի ու Ղազրիկեանի նման բազմահմուտ անձնաւորութիւններ չիմանային նրա տեղը եւ որ եւ է ձեւով չօգտադործէին իրենց աշխատութիւնների համար: Վենետիկի եւ Վիեննայի Մխիթարեան հարուստ մատենադարաններն անգամ, ուր հաւաքուած եւ ամենայն խնամքով պահուած են հայկական բոլոր հրատարակութիւնները — անգամ նրանք էլ չունեն «Շտեմարան»-ը:

Այսպիսի պայմաններում թերեւս աւելի մեծ կարեւորութիւն են ստանում այն տեղեկութիւնները, որ մենք սոյն յօդածով նպատակ ունենք հաղորդելու «Շտեմարան»-ի մասին:

Ինչպէս մի անգամ էլ ասել ենք՝ Նոր - Զուղան միակ վայրն է, ուր կարելի է գտնել ոչ միայն իր՝ Նոր - Զուղայի Ամենաիրիշչեան վանքի հին հրատարակութիւնները — թէեւ շատ հազաւ գրւած — այլ եւ հնդկահայոց հին հրատարակութիւնները: Պատճառը թէ առաջին եւ թէ երկրորդի նկատմամբ հասկանալի է: Բայց մատնանչենք միայն հնդկահայ հրատարակութիւնների պատճառները. —

Ամենից առաջ՝ որ Զուղան ի հնուց անտի կենդանի յարաբերութիւն է ունեցել եւ մինչեւ այսօր էլ տակաւին ունի Հնդկաստանի եւ հնդկահայութեան հետ: Հետեւապէս այդ կապի շնորհիւ՝ հնդկահայ գրքերն ու հրատարակութիւնները ամենայն հեշտութեամբ պէտք է որ Զուղա ընկնէին:

Երկրորդ՝ հնդկահայոց ճշտող մեծամասնութիւնը ջուղայեցիներ են եղել անցեալում եւ ներկայումս ջուղայեցիներ են, որոնք իրենց ծնողները, հարազատներն ու ազգականներն են ունեցել եւ այժմ էլ ունեն Զուղայում: Բնական է, ուրեմն, որ հնդկահայ ջուղայեցիների միջոցով հնդկահայոց գրքերն ու հրատարակութիւնները, նւէրի կամ այլ անունների ներքոյ, Զուղա հասնէին:

Եւ, վերջապէս, երրորդ՝ ջուղայեցիք ընդհանուր առմամբ ուսումնասէր, գրասէր մարդիկ են, մանաւանդ հները. այսինքն՝ դիւր ու գրականութիւն սիրող եւ գիրքը իրրեւ սրբութիւն պահող: Ահա թէ ինչո՞ւ Զուղայում եւ իր հայկական գիւղերում ամէն տան մէջ, անգամ անգրագէտ գիւղացիների տանը, այսօր էլ դուք կարող էք գտնել բաւական թւով հին գրքեր, մեծ մասամբ կրօնական եւ հնդկահայ հրատարակութիւններից:

Եւ մեր որոնումների մէջ մենք բախտ ունեցանք գտնելու «Շտեմարան»-ի երկու օրինակը, երկուսն էլ, դժբախտաբար, քրքրւած ու

թերթերը թափւած : Բայց մէկը համեմատաբար մի քիչ աւելի լաւ է մնացած եւ իր այդ վիճակով էլ բաւական հարուստ եւ թանգարժէք վկայութիւններ կարող է տալ իր մասին : Օգտուելով գլխաւորապէս այդ լաւ օրինակից, մենք ուզում ենք մեր ուսումնասիրութեան արդիւնքը ներկայացնել այստեղ հնդկահայոց այդ «կորած» ու անյայտութեան դատապարտւած լրագրի մասին :

Բ .

«ՇՏԵՄԱՐԱՆ»-Ի ԲԱՐՈՅԱԿԱՆ ՏԵՐԸ

ԺԹ . դարի սկզբներում հնդկահայ գաղութը տակաւին բաւական զօրեղ էր — մանաւանդ անտեսապէս եւ մշակութային մարդում : Դրան զուգընթաց՝ յատկապէս երիտասարդութեան շարքերում գոյութիւն ունէր մի գեղեցիկ շարժում — այն է՝ ձգտել կատարելութեան ինքնազարգացման ճանապարհով եւ միեւնոյն ժամանակ ազդի լուսաւորութեան սրբազան գործին ծառայել :

Այդ զոյգ նպատակի համար հիմնւում էին զանազան ընկերութիւններ եւ միութիւններ, կամ ժամանակի բառով եթէ ասենք՝ միաբանութիւնք, ժողովք : Յիշենք նմոյշի համար Արշարունեան եւ Իւրանութիւնք, ժողովք : Յիշենք նմոյշի համար Արշարունեան եւ Իւրանութիւնք, ժողովք : Յիշենք նմոյշի համար Արշարունեան եւ Իւրանութիւնք, ժողովք : Յիշենք նմոյշի համար Արշարունեան եւ Իւրանութիւնք, ժողովք : Յիշենք նմոյշի համար Արշարունեան եւ Իւրանութիւնք, ժողովք :

Յատկապէս վերջինը կապ ունի մեր նիւթի հետ, ուստի եւ մի թուոցիկ ծանօթութիւն նրա մասին աւելորդ թող չհամարւի :

Ընկերութիւնը հիմնւել էր 1815 թւին, իր շուրջը համախմբելով ուղեւորւած ու գաղափարական երիտասարդների մի խմբակ : Նրա անդամները մեղուի ջանասիրութեամբ մի կողմից աշխատում էին իրենց ինքնակրթութեան ու դաստիարակութեան համար : Այդ նպատակով՝ նրանք թարգմանութիւններ էին անում — գլխաւորապէս անգլիերէնից — գրում էին բանաստեղծութիւններ, հեղինակում էին գրական զանազան երկեր եւ միասին հաւաքւելով, կարդում, քննադատում եւ մշտեքրի փոխանակութիւն էին ունենում :

Ժողովրդի լուսաւորութեան կամ կրթութեան գործին էլ օգտակար լինելու, իրենց բառով եթէ ասենք՝ օճան (օգնութիւն, բարիք) սփռելու համար նրանք առաջին հերթին բաց են անում Բոմբէյում մի դպրոց, Դամարճակ *) Ուսումնասիրողի անունով, ուր հայ մանուկները ձրի պիտի կրթէին եւ ուսում առնէին :

*) Դամարճակ կամ Դեմալամջ նշանակում է՝ հետաքրքրողների բազմութիւն. ձրեմն դպրոցը ուսմամբ, կրթութեամբ հետաքրքրողների բազմութեան համար էր :

Բայց նրանց հարկաւոր էր և մի տպարան, ուր կարողանային տպագրել իրենց վաստակները եւ մանաւանդ մեր հին, տակաւին անտիպ մնացած գրչագրերը, որոնց հրատարակութիւնը ժողովրդի լուսաւորութեան եւ ազգային ինքնազփութեան արթնացման տեսակէտից գտնում էին խիստ անհրաժեշտ:

Օճանասփիւռեանի այդ դեղեցիկ փափաքին ընդառաջ է գնում մադրասաբնակ մեծատուն Պօղոս Յորդանանեանը, որը մէկ տպարան ձեռք բերելով՝ նւիրում է ընկերութեանը: Սակայն, տպարանը փոխանակ Բոմբէյի, ուր գտնւում էր Օճանասփիւռեանը, հաստատւում է Կալկաթայում, որովհետեւ ընկերութիւնը, յարգելով Իմաստախնդրեան միաբանութեան խնդիրը՝ ժամանակաւորապէս զիջում է նրան իր մամուլը, ի հարկէ, որոշ պայմանով:

Իմաստախնդրեան Ընկերութիւնը, ըստ մեր կարգած դրացուցակի, օգտագործում է տպարանը սկսած 1821 թ. Յունւարից մինչեւ նոյն տարւայ Հոկտեմբեր ամիսը, հրատարակելով հետեւեալ գրքերը — Անդիտաց անպէտ — 31 Յունւարի, Հրիտակ հօր ուրումն — 15 Յուլիսի, Անաչառ բան — 12 Օգոստոսի եւ Խորագիմայ դժբողութեան — 1 Հոկտեմբերի: Այս հրատարակութիւններից եւ ոչ մէկի վերա տպարանը չի յիշած Օճանասփիւռեան Ընկերութեան անունով, այլ պարզապէս՝ մեզ ծանօթ Պօղոս Յորդանանեանի անունով — տպագրեալ յրեմայեալ տպարանի Յորդանանեան պարոն Պօղոսի:

1821 թւի վերջերից, հաւանօրէն Նոյեմբերից, տպարանն անցնում է իր իսկական տիրոջ, այսինքն՝ Օճանասփիւռեան Ընկերութեան ձեռքը, մնալով նորից Կալկաթայում: Այժմ Օճանասփիւռեանն է սկսում հրատարակութիւններ անել, բայց արդէն որոշապէս տպարանը իր անունով յիշատակելով — տպագրեալ յՕճանասփիւռեանց տպարանի:

Հրատարակում է՝ Հատարակախօսութիւն — 1821 թ. Դեկտեմբ. 19, որը — ինչպէս գիտենք, «Խորագիմայ դժբողութեան» թատերգութեան ընդարձակ բացատրութիւնն է, Ծաղկաստան — 1822 թ. (ամիսն անյայտ), Դիալիքտիկէ — 1822 թ. 8 Օգոստոսի եւ Մշտիկ — 1823 թ. Յունւարի սկզբին:

Նշանակում է՝ Օճանասփիւռեան տպարանը իր իսկ ընկերութեան անունով, ըստ մեր վերոյիշեալ ցուցակի, գործել է 1821 թ. Դեկտեմբերից մինչեւ 1823 թւի Յունւար ամիսը, որպիսի ժամանակամիջոցը — ինչպէս քիչ յետոյ կը տեսնենք — համապատասխանում է «Շտեմարան»-ի տեւողութեան միջոցին:

Սակայն, Օճանասփիւռեան Ընկերութիւնը, անշուշտ, չբաւակա-

նանալով վերեւում յիշատակած մշակութային դործունէութեամբ — դպրոց եւ գրքերի հրատարակութիւն — յղանում է մէկ սքանչելի միտք եւս — ունենալ իր սեփական լրագիրը: Ուրիշ խօսքով՝ իր հաւատարիմ բերանը, որով կարողանար լուսաւորութեան քարոզը հընչեցնել ամենքի ականջին եւ նրա ճանապարհները դժեւ, ցոյց տալ հասարակութեանը:

Եւ ահաւասիկ ծնունդ է առնում «Օճանասիրտեան» թերթը, որի մասին, դժբախտաբար, շատ քիչ բան գիտենք: Անգամ ստոյգ յայտնի չէ, թէ ո՞րտեղ է նա հրատարակւել, Բոմբէյո՞ւմ թէ Կալկաթայում, թէպէտ մեր լրագրութեան պատմութեան հեղինակները — Հ. Գալէմքեաբեան եւ Գ. Լեւոնեան — Բոմբէյում են դնում, անշուշտ, ելնելով այն փաստից, որ Ընկերութիւնը Բոմբէյում էր կազմւել:

Չգիտենք նոյնպէս, թէ ո՞վ էր նրա փաստական խմբագիրը, ե՞րբ է սկսւել, մինչեւ ե՞րբ է հրատարակւել, ի՞նչպիսի ծաւալ ունէր, ի՞նչ բովանդակութիւն, ի՞նչ լեզուով էր լոյս տեսնում — գրաբա՞ր թէ՞ աշխարհաբար, եւայլն, եւայլն:

Փակագծերի մէջ նկատենք, որ Գ. Լեւոնեանը «Օճանասիրտեան» թերթի սկիզբը դնում է «1840-ական թւականների վերջերին, մօտաւորապէս 1847 - 49 - 50 թւականներին: Կարծում ենք, որ դա սխալ է, որովհետեւ Օճանասիրտեան Ընկերութիւնը հիմնւել է 1815 թւին եւ չէր կարող նրա թերթը հրատարակել 1840-ական թւականների վերջերը, երբ Ընկերութիւնը վաղուց արդէն պատմութեան դիրկն անցած էր: Միւս կողմից — ինչպէս տեսանք — Օճանասիրտեան տպարանը դործել է մինչեւ 1823 թւի սկիզբները. հետեւաբար դործութիւն չունեցող տպարանում չէր կարող 1840-ական թւականների վերջերին թերթ հրատարակել:

Գ. Լեւոնեանը «Օճանասիրտեան» թերթի մասին շարունակում է. «Որտոտ դժւար է իմանալ, թէ ի՞նչ ծագումից եւ ո՞րտեղից է վերցրած այս հայ պարբերականի անունը»: Պարզ է, որ Լեւոնեանը թիւրիմացութեան մէջ է, քանի որ շատ լաւ յայտնի է, թէ ո՞րտեղից է վերցրած եւ ի՞նչ է նշանակում «Օճանասիրտեան» անունը: Թերթը համանուն ընկերութեան օրգանն էր, սեփական լրագիրը, որի նպատակն էր լուսաւորութիւն տարածել, այսինքն օճան, օգնութիւն սփռել: Այստեղից էլ ծագում էր «Օճանասիրտեան» անունը:

Պէտք է ենթադրել, որ «Օճանասիրտեան» լրագիրը երկար կեանք չի ունենում եւ իր տեղը չուտով զիջում է մէկ ուրիշ թերթի՝ «Շտեմարան»-ին — խմբագրութեամբ Օճանասիրտեան ընկերութեան ամենագործօն ու ամենապատրաստւած անդամի՝ դպիր Մարտիրոս Դաւթեան Մկրտչեանի:

Դժբախտաբար, «Շտեմարան»-ի մէջ մենք չգտանք որ եւ է ցուցմունք կամ վկայութիւն առ այն — բացի այն, որ նա տպագրւում էր Օճանասիրուեան տպարանում — որ նա անկասկած Օճանասիրուեան Ընկերութեան օրգանն է եւ «Օճանասիրուեան» թերթի շարունակութիւնը: Դա մեր կողմից միայն մի ենթադրութիւն է, բայց հիմնւած մի շարք հաւանականութիւնների վրա, մանաւանդ երբ մեր այդ ենթադրութիւնը համեմատում ենք մէկ ուրիշ եւ բոլորովին յարուսման օրինակի հետ, նա արդէն մօտենում է իրականութեան:

Ինչպէս յայտնի է՝ Օճանասիրուեանից 25 - 30 տարի յետոյ (1845 թ.) Կալկաթայում կաղմեց Արարատեան Ընկերութիւնը — գործօն մանակցութեամբ Մ. Թադիադեանի — որը պիտի գործէր նոյն պայմաններում եւ հետապնէր նոյն նպատակները, ինչ որ Օճանասիրուեան Ընկերութիւնը: Ահա ուրեմն համեմատութիւնն ու եղբակացութիւնները, որ մեզ կարող են ուղեցոյց լինել մեր որոնումների մէջ:

Արարատեան Ընկերութեան ամենաառաջին հոգսերից մէկն է լինում ունենալ իր սեփական տպարանը եւ սեփական լրագիրը: Ընկերութեան անդրանիկ կոչի մէջ, ուղղւած «Առ պատելի Հասարակութիւն Ազգիս», կարդում ենք.—

«Մին ժամանակ էր, որ թէ Մադրաս եւ թէ տեղս մեր ազգային օրագրութիւնք էր հրատարակման, այլ աւա՛ղ, որ փոխանակ օր առօր ծաղկելոյ եւ ազգագոյուտ պտղովը զարդարվելոյ, ձիգ ժամանակ է, որ միանգամայն խափանվել է. մինչ դեռ այլ Քրիստոնէից մէջ հարիւրապատիկ յաւելանալով զնաման է: Թողունք զՆրօպ եւ Ամերիկայ եւ միայն աստ մեր քաղաքի մէջ (Կալկաթայում — Իր.) կտեսնեմք ո՛րքան օրական, շաբաթական եւ ամսական զրութիւնքան հրատարակման ինկլիզի մէջ... Նոյն իսկ Բանգալցիք եւ Պարսիկը (Մղուանին) իւրաքանչիւրն իւրեանց լեզուան տեսակ - տեսակ օրագրեր ունեն: Քանզի յայտնի տեսմանն (տեսնում են), որ օրագիրն պիտանի գործ է վասն ազգի. տեսակ - տեսակ ուսումնական եւ բարոյական գիտութեամբք եւ առեւտրական ծանօթութեամբք ընդլայնելով եւ ծաղկեցուցանելով, զուարճացուցանելով եւ կրթելով մարդոյս միտքն առ բարին:

Այսպիսի ազգագոյուտ բարութեան Հնդստանայ կողմարէնքի մեր պատուելի ազգի կարօտութիւնն լցուցանելոյ ազաղաւ... շատ հարգանակաւ այս մեր ցանկութիւնն ի կատար հասուցանել: Այս տպարանումն կհրատարակի շաբաթական օրագիր մի քառածալ, որ է

մերո Ազգասէր, յորում բարոյական, բանասիրական եւ այլ պիտանի եւ ազգաօգուտ գրութիւնք եւ թարգմանութիւնք կտպվեն... » : *)

Դուք տեսնում էք ուրեմն, թէ Արարատեան Ընկերութիւնը ինչպիսի՜ խոշոր կարեւորութիւն էր ընծայում տպարանին ու լրագրին, մանաւանդ լրագրին, ժողովրդի լուսաւորութեան գործում : Ու նա կարճ ժամանակի ընթացքում ձեռք է բերում իր տպարանը եւ հիմնում իր սեփական թերթը՝ «Ազգասէր», խմբագրութեամբ Մ. Թաղիադեանի :

Հետեւաբար, անհաւանական չէ, որ Օճանասփիւռեան Ընկերութիւնը եւս, ճիշդ նոյն մտահոգութիւններով առաջնորդւելով, իր տպարանը ձեռք բերելուց յետոյ՝ ունենար եւ իր սեփական լրագիրը — նախ՝ «Օճանասփիւռեան»-ը եւ ապա՝ «Շտեմարան»-ը :

Եւս մէկ զուգահեռ.

Տպարանը Արարատեան Ընկերութեան սեփականութիւնը լինելով՝ հէնց սկզբից հիմնադիրները մէկ ընդհանուր կանոն են սահմանում — որ առանց բոլոր անդամների գիտութեան ու հաճութեան՝ ոչինչ չի կարող տպւել այնտեղ, որպէսզի տարաձայնութիւն ու դժգոհութիւններ չծագին Ընկերութեան ծոցում : «Մին կանոննա՞ն դրել իւրեանց դաշնագրի միջումն, որ ամենայն տպագրելի բանէր առանց վերահասութեան եւ հրամանի անդամոց Ընկերութեան չտպվեն » :

Սրանից մենք կամենում ենք եզրակացնել, որ եթէ Օճանասփիւռեան տպարանն էլ սեփականութիւնն էր համանուն Ընկերութեան, ապա ուրեմն այնտեղից էլ չէր կարող ոչինչ լոյս տեսնել առանց բոլոր անդամների գիտութեան եւ համաձայնութեան : Հետեւաբար, չէր կարող լոյս տեսնել եւ մի լրագիր, այն էլ պարբերաբար եւ տարինների ընթացքում, եթէ նրա հակադէպ էր պատկանում տպարանատէր Ընկերութեան : Այլ խօսքով՝ «Շտեմարան»-ի իրաւական տէրը Օճանասփիւռեան Ընկերութիւնն էր եւ ո՛չ թէ նրա խմբագիր դպիր Մարտիրոս Մկրտչեանը :

Յետոյ, այդ երկու ընկերութիւնները — Օճանասփիւռեան եւ Արարատեան — իրար նմանում էին ո՛չ միայն իրենց նպատակներով ու նրանց հասնելու ճանապարհներովը, այլ յաճախ նաեւ զանազան երկրորդական բաներով եւս : Այսպէս, օրինակ, նրանց թերթերի խմբագիրները խմբագիր չէին կոչւում եւ սոսկական խմբագիր էլ չէին, այլ տպարանի կառավարիչներ կամ իրենց բառով՝ վերատեսուչներ : Տպարանի կառավարութիւնը աւելի ընդարձակ եւ մեծ պաշտօն էր

*) «Ազգասէր», Կալկաթա, 1845, քիւ 1, 16 Օգոստ., էջ 2 :

քան միայն խմբագրութիւնը, որը իբրեւ մի մաս մտնում էր վերատեսչի իրաւունքների ու պարտականութիւնների մէջ: Թաղիադեանը իրեն կոչում էր — ինչպէս եւ ուրիշներն էին նրան կոչում — վերատեսուչ Արարատեան տպարանի, եւ այդպէս էլ շատ անգամ ստորագրում էր: Դպիր Մարտիրոսը եւս իրեն կոչում էր վերատեսուչ Օճանասիւիւռեան տպարանի եւ այդպէս էլ ստորագրում էր (Վ. Օ. Տ.):

Արդ, ինչպէս որ Մ. Թաղիադեանը լինելով վերատեսուչը Արարատեան Ընկ. տպարանի, միեւնոյն ժամանակ էր եւ նրա թերթի խմբագիրը, այդպէս էլ դպիր Մարտիրոսը վերատեսուչն էր Օճանասիւիւռեան տպարանի եւ խմբագիրը «Շտեմարան» թերթի: Հետեւաբար, «Շտեմարան» թերթը Օճանասիւիւռեան Ընկերութեան էր պատկանում, նա՛ էր թերթի իրաւական տէրը:

Գ.

ԱՐՏԱՔԻՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ութածալ գրքի ծաւալ ունի «Շտեմարան»-ը: Երեսներն էլ գրքի յաջորդականութեամբ հետեւում են միմեանց, այնպէս որ կարելի է գրքի նման կազմել: Երեսների ընդհանուր գումարն է 1084, այսինքն իր ամբողջ տեւողութեան ընթացքում «Շտեմարան»-ը տւել է ընդամենը 1084 էջ:

Տպագրութիւնը այնքան էլ գովելի չէ — եթէ աւելին չասենք: Առհասարակ, Օճանասիւիւռեան տպարանի բոլոր հրատարակութիւններն էլ տպագրական արւեստի տեսակէտից շատ քննադատելի են: Մի կողմ թողած անհամար տառասխալները, կոտորած եւ մաշւած տառերն էլ այնքան շատ են, որ յաճախ դժւար է կարդացւում: Թուղթը հասարակ է եւ միջակից ցած:

Մեր ձեռքի տակ եղած երկու օրինակներն էլ կազմւած էին, եւ որովհետեւ կազմելիս թերթի չափիկները (կամ երեսները) հանւած են եւ կամ թերեւս չափիկ չի ունեցել թերթը, ուստի հնարաւոր չէ իմանալ, թէ քանի՞ Ռոմէ Է լոյս տեսել եւ իւրաքանչիւր Ռոմէ քանի՞ էջից: Մանաւանդ որ հրատարակութեան տեւողութիւնն էլ հնարաւոր չէ ստոյգ որոշել: Եթէ այս վերջին պարագան ստոյգ իմացւէր, իմացւէր նաեւ, թէ իւրաքանչիւր Ռոմէ քանի՞ էջից էր բաղկանում, այդ դէպքում թւաբանական մի հասարակ գործողութեամբ կարելի էր իմանալ թերթի Ռոմէների որքանութիւնը:

Բայց թէ թերթը Ռոմէներ ունեցել է — կասկածից դուրս է: Այս-

պէս, օրինակ, 1000 էջում դառնում է տպարանի մի յայտարարութիւնը՝ «հայցուած»ը, որով ունեցողներից խնդրում է, եթէ իրենց հարկաւոր է, տպարանին վերադարձնել «Շտեմարան»-ի 1, 12, 25 եւ 37 №-ները:

Թերթերի շապկի վրա եւ կամ բնագրում, ճակատին, սովորաբար միշտ մատնանշւած է լինում ո՛չ միայն թերթի ուղղութիւնը կամ բովանդակութիւնը, այլ նաեւ թէ ի՞նչ թերթ է — օրագիր, ամսաթերթ, շաբաթաթերթ, եւն., եւ ե՞րբ է լոյս տեսնում:

«Շտեմարան»-ի նկատմամբ այդ խնդիրները եւս ճշգեղիւ՝ անյաղթելի դժարութիւնների առաջ է կանգնում հետաքրքրուողը, որովհետեւ բնագրում ոչինչ չկայ այդ ուղղութեամբ, իսկ շապկներն էլ — եթէ թերթը շապիկ ունեցել է եւ այդ ամենն էլ նրա վրա մատնանշւած է եղել — բացակայում են մեր ունեցած օրինակներում:

Ուղղութեան մասին կը խօսենք իր տեղում, երբ թերթի բովանդակութիւնը կը քննենք: Ինչ վերաբերում է այն հարցին, թէ ի՞նչ թերթ է «Շտեմարան»-ը եւ ե՞րբ էր լոյս տեսնում, այդ մասին բաւական փաստեր տալիս է ինքը թերթը — թէ՛ աշխատակիցների եւ թէ՛ իր խմբագրի բերանով:

Զմոռանանք ասել, որ մի լաւ սովորութիւն ունի «Շտեմարան»-ը — ներկայ դէպքում՝ մե՛զ համար լաւ: Իւրաքանչիւր յօդւած, բանաստեղծութիւն կամ թղթակցութիւն, որ ուղարկւում է նրա, ուղարկւում է սովորաբար հեղինակի մի նամակով, ուր խմբագրից խնդրւում է՝ տպագրութեան յանձնել թերթի №-ներից մէկում: Այն էլ ասենք, որ այդ նամակներին էլ միշտ հետեւում է խմբագրի պատասխանը, ուր նա, ճիշդ ուսուցչի նման, իր կարծիքն ու դիտողութիւններն է յայտնում ուղարկւած նիւթերի մասին:

Ահաւասիկ այդ նամակներն են, որ հնարաւորութիւն են տալիս ճշգելու, թէ ի՞նչ թերթ է «Շտեմարան»-ը եւ ե՞րբ էր լոյս տեսնում:

Նմոյշի համար բերենք մի քանի քաղւածքներ այդ նամակներից, մանաւանդ որ նրանք հաղագիւտ լինելու հետ միասին, նաեւ պարզ դադափար են տալիս «Շտեմարան»-ի լեզւի, բովանդակութեան եւ այլ պարագաների մասին:

Թղթակից Հերմենսը 4 Մայիսի 1822 թւակիր նամակով գրում է խմբագրին. «Բոյ շաբաթական «Շտեմարան»-ում տպւած ոտանաւորքն տեսանելով...» (էջ 351):

495 էջում Թուկիդիտէոսը գրում է. «Ներքոյ գրեալ խրթաբանութիւնն կամ խանելուկն շնորհես քո եօթնեկեան Շտեմարանումն հրատարակես...»:

508 էջում Ահարոնը գրում է. « Տխուրամ գրել որ քոյին անցեալ շաբաթէն հրատարակեալ արժանաւոր Շտեմարանումն իմ յօրինեալ Դաւթեան ողբերգութիւնն և Մովսիսեան Օրհնութիւնն չտեսի... » Բաշխիւր 517 էջում գրում է. « Յարգոյամեծար Տպագիր Շտեմարանին Խօթնեկի »։ Եւ ուղարկում է հետը մի ոտանաւոր տպագրութեան համար : 554 էջում թղթակից Շէքսպիրը գրում է. « ... Եւ որովհետեւ քո շաբաթական Շտեմարանն մշտապէս եղեալ է միջոց օգտաւէտ, որպէս եւ զարճացուցիչ իրաց, յոսամ յօժարակամ կհրատարակես զայս դիտողութիւնս... » : 1822 թ. Յուլիս 4-ին, Ուսումնասէրը գրում է. « ... Արժանի վարկայ հրատարակութեան (իր յօդւածը — իր.) ի քումդ մխիթարիչ Խօթնեկան Շտեմարանի... » (էջ 696), եւայլն :

Եւս մի վկայութիւն խմբագրի մէկ պատասխան — դիտողութիւնից. « ... Մին կիրակի եթէ մին երկու սհաթ Տետրս («Շտեմարան»-ի №-ը — իր.) հետամանայ (ուշանում է), տպարանի դուռն, կադմարարի դուքանն փոսայ ընկաման (մաշում, փոս է ընկնում), էնքան գնալ գալան առում (գնալ — գալ են անում) վասն տետր ուղելէ համար » (էջ 513) :

Այս բոլոր վկայութիւնները, որոնց շարանը դեռ չատ երկար կարելի է շարունակել եւ որոնց մէջ մենք ընդգծել ենք «չարաթական» ու «եօթնեկեան» բառերը, այլեւս որ եւ է կասկած չեն թողնում, որ դպիր Մարտիրոսի «Շտեմարան»-ը շարաթաթերթ էր :

Դրա հետ միասին նաեւ պարզւում է, որ նա լոյս էր տեսնում կիրակի օրերը, որը որոշապէս երեւում է խմբագրի վերոյիշեալ խօսքերից. « Եթէ մի կիրակի թերթի №-ը մի քանի ժամ ուշանում էր, տպարանի դուռն ու կադմարարի խանութը փոս էին ընկնում, այնքան գնացող — եկող եւ թերթ ուզող էր լինում » :

Որ յիշուի «Շտեմարան»-ը լոյս էր տեսնում կիրակի օրերը — այդ ապացուցող ուրիշ վկայութիւններ էլ գտնում ենք թերթի մէջ : Ահաւասիկ թղթակից Նշմարողը ինչ է գրում. « Զարթնելով կանուխ ընդ առաւօտն Կիւրակէի հանդերձ ակնկալութեամբ տեսանելոյ զթուղթ մի հրատարակեալ ի Շաբաթական Շտեմարանի, զոր ուղարկեալ էի աւուրբ միով յառաջ... » (էջ 575) :

Եղրակացութիւն. — Մեր բերած վկայութիւնները անհերքելիօրէն ապացուցանում են — առաջին՝ որ «Շտեմարան»-ը շաբաթաթերթ էր, եւ երկրորդ՝ որ լոյս էր տեսնում կիրակի օրերը :

Դ.

«ՇՏԵՄԱՐԱՆ»-Ի ԺԱՄԱՆԱԿԸ

Նախ՝ թէ ե՞րբ, ո՞ր թւից եւ ո՞ր ամսից է սկսւած «Շտեմարան»-ի հրատարակութիւնը: Ինչպէս վերեւում յիշեցինք՝ այս մարզում եւս մէկ կատարեալ անորոշութիւն եւ տարակարծութիւն է տիրում մեր գրականութեան մէջ «Շտեմարան»-ի նկատմամբ:

Սինդակուրի «Ուսումնասէր» թերթի հաշուով՝ նրա սկզբնաւորութիւնը եղած պիտի լինի Կալկաթայի «Ազգասէր» թերթից քառասուն կամ յիսուն տարի առաջ: Ուրեմն 1800 եւ 1810 թւականների միջոցում: «Ուսումնասէր»-ի այդ տեղեկութեան վրա հիմնւած, Հ. Գալէմբարեանը եւս նոյն ժամանակներում է դնում՝ «1800-ին և 1810-ին մէջերը»:

Հ. Ղազիկեանը դնում է 1818 թւին, այն էլ հարցականով: Հ. Կարապետեանը դնում է 1830-ին, նոյնպէս հարցականով: Գ. Լեւոնեանը դնում է 183⁰-ին, այսինքն՝ 1830-ական թւականների ընթացքում, բայց նորից հարցականով եւ անստույգ, թէեւ քիչ յետոյ, օգտւելով «Հանդէս Ամսօրեայ»-ից, ուղղում է եւ դնում 1821-ին:

Ինչպէս տեսնում էք, մինչեւ այսօր մէկ կատարեալ չփոթ եւ անստուգութիւն է տիրում «Շտեմարան»-ի սկզբնաւորութեան թւականի նկատմամբ: Որքան մարդ, այնքան էլ տարբեր թւականներ եւ բոլորն էլ, բացի մէկից, սխալ:

Ստույգն այն է, որ «Շտեմարան»-ի ծնունդը եղել է 1821 թւականին: Դա անհերքելիօրէն ապացուցում են ոչ միայն մեր ձեռքի տակ եղած կրկին օրինակները, այլ եւ «Օճանասիրտեան» տպարանի դոյութեան ժամանակամիջոցը, ինչպէս եւ «Յորդոր» կոչւած ժողովածուն *), որի մէջ մի քանի տարբեր առիթներով հանդիպում ենք «Շտեմարան»-ին եւ միշտ կողքին էլ դրւած նրա կեանքի տարիները՝ 1821 - 1823:

Դժբախտաբար, ստույգ չենք կարող պնդել, թէ 1821 թւի ո՞ր ամսից եւ ամսի քանիսի՞ց է սկսւել նա: Մեր ձեռքի լաւագոյն օրինակը, սկզբի թերթերը թափած լինելով, սկսւում է 51-րդ էջից եւ այդ 51-րդ էջը պատկանում է արդէն 1822 թւականի Յունւար ամսին: Դա մենք իմանում ենք նախ նրանից, որ 51-րդ էջը սկսւում է մի թղթակցութեամբ (համապատասխանութիւն), ուր նկարագրւած են

*) «Յորդոր առ Գրագիտութիւն», Կալկաթա, Տպ. Մկրտիչ Միսնարաց, 1840 թ., էջ 103, 140, եւլն.:

կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանի առաջին կիսամեակի քննութիւնները 1821 թ. Դեկտեմբերի վերջերին: Երկրորդ՝ խմբագրի այդ առթիւ գրած պատասխան - դիտողութիւնից, որի թւականն է՝ 11 ջանվէր (յունւար) 1822 թ.:

Նշանակում է՝ «Շտեմարան»-ը սկսած պիտի լինի ամեմաշատը 1821 թւի վերջերին, Նայեմբերի կէսերին կամ Դեկտեմբերի սկզբին:

Եթէ իւրաքանչիւր համարը ընդունենք 8 էջից բաղկացած եւ ամսական էլ հաշւելով 4 համար, ապա ուրեմն լաւագոյն դէպքում նա սկսած պիտի լինի Նոյեմբերի կէսերին: Իսկ եթէ իւրաքանչիւր համարը ընդունենք մէկ մամուլից, այն է՝ 16 էջից բաղկացած, այդ դէպքում նա սկսած պիտի լինի Դեկտեմբերի սկզբին: *)

Մեր այս հաշիւն արդարանում է նաեւ նրանով, որ, ինչպէս տեսանք, մինչեւ 1821 թւի Հոկտեմբերը Օճանասիրական տպարանը — ուր տպւել է «Շտեմարան»-ը — եղել է Իմաստախնդրեան Ընկերութեան ձեռքում, եւ Հոկտեմբերից յետոյ է միայն անցել իր իսկական տիրոջ ձեռքը: Հետեւաբար, Օճանասիրական Ընկերութիւնը իր թերթը կարող էր հրատարակել այն ժամանակից միայն, երբ տպարանը իր տրամադրութեան տակ էր, այսինքն՝ 1821 թւի Նոյեմբերից ոչ առաջ:

Գալով «Շտեմարան»-ի կեանքի տեսողութեանը կամ այլ խօսքով՝ նրա դադարման թւականին, այդ մասին եւս մինչեւ այսօր տեսակէտների միօրինակութիւն չկայ եւ չի եղել: Ու չէր էլ կարող լինել, որովհետեւ նախ՝ ո՛չ ոք այդ թերթը իր ձեռքում չի ունեցել, չի տեսել, եւ երկրորդ՝ մեր մամուլի մէջ էլ հարկաւոր տեղեկութիւնները պակասում են նրա մասին:

Աւելի ճիշդը՝ մեր մամուլի պատմութեամբ զբաղող հեղինակներից եւ ոչ մէկը — որքան յայտնի է — որ եւ է թւական չի տալիս «Շտեմարան»-ի դադարման համար: Նրանք ամենքը բաւականաճառում են միայն նրա սկզբնաւորութեան քիւր մատնանշելով, այն էլ — ինչպէս տեսանք — հարցականով ու սխալ:

Բարեբախտաբար, մենք կարող ենք այդ թւականը եւս ստուգւած համարել, այն է՝ 1823, հիմնւելով թէ՛ մեր ձեռքում ունեցած օրինակների, թէ՛ Օճանասիրական տպարանի գոյութեան եւ թէ «Յորդոր»-ի վկայութիւնների վրա:

*) Մեզ քում է, որ «Շտեմարան»-ը էջերի որոշ եւ ճշգրիտ սահմանւած թիւ չի ունեցել, եւ դա կախած է եղել միւսերի քանակութիւնից, օրինակ՝ մի համարը քանում է էջ 120 - 136, նրան յաջորդող թիւը՝ 137 - 164 էջ, սրան յաջորդողը՝ 165 - 198 էջ, եւլն:

Սակայն, շտապենք աւելացնել, որ վերոյիշեալ պատճառներով, դժբախտաբար, չենք կարող ստոյգ ասել, թէ 1823 թւի մինչեւ ո՞ր ամիսն է շարունակել նա իր գոյութիւնը եւ մինչեւ ամսի քանի՞սը: Բայց միանգամայն հաւանական ենք գտնում, որ մինչեւ Յունաւարի վերջը եւ կամ ամենաուշը մինչեւ Փետրուարի սկզբները:

Մեր այս ենթադրութեան մէկ հիմքն այն է, որ 1822 թւից յետոյ, այն է՝ 1823 թւին, շատ քիչ էջեր է տւել «Շտեմարան»-ը: Մինչդեռ 1822 թւին նա տւել է մօտաւորապէս 1000 - 1010 էջ, 1823-ին տւել է ընդամենը 40 - 45 էջ, այսինքն՝ հազիւ մէկ ամսւայ բաժին:

Միւս կողմից՝ Օճանասփիւռեան տպարանի վերջին հրատարակութիւնը — Յովհ. Աւդալեանի «Մշտիկ» աշխատութիւնը — լոյս է տեսել «ի սկզբան Յունվարի յամի Տեառն 1823»: Որից յետոյ, ինչպէս երեւում է, տպարանն այլեւս անկարող է լինում իր գոյութիւնը շարունակելու — դործ չլինելու եւ կամ նիւթական դժարութիւնների պատճառով:

Անհաւանական չէ, որ դրժերի հրատարակութեան դադարման հետ միասին՝ դադարման ենթարկւեր է «Շտեմարան»-ը եւս, որովհետեւ միայն մի թերթի համար — այն էլ՝ ինչպէս քիչ յետոյ կը տեսնենք, երբ ահագին դժգոհութիւն կար հասարակութեան մէջ նրա ու իր խմբագրի դէմ — այլ եւս իմաստ չունէր տպարան պահել:

Տպարանի այդ անյոյս վիճակը — ուրեմն եւ «Շտեմարան»-ի հոգեվարքը — շատ պարզ կերպով տեսնում ենք խմբագրի մէկ յայտարարութիւնից, որը տպւած է թերթի վերջին համարներից մէկում. — «Յետ Օրացոյցն տպվելէն Տպարանն անգործ կմնայ մինչ վերստին ինչ առաջադրութիւն որ այսուհետ առվի, նոյն եղանակաւն կրկին դործ կդնվի: Տպարանին ովոք տալիքայ՝ հատուցումն փութանակի առի (անի, կատարի), շնորհակալ կլինեմ » : (էջ 1076):

Եւ, վերջապէս, որ եւ ամենից գլխաւորն է, «Շտեմարան»-ի վերջին համարում եւ վերջին էջերում մենք գտնում ենք երկու գրութիւն, որոնք, բարեբախտաբար, ունեն իրենց թւականները: Առաջինը՝ խմբագրի շնորհակալութեան խօսքն է ուղղւած այն բոլորին, որ օժանդակ են հանդիսացել տպարանին, ուրեմն եւ «Շտեմարան»-ին: Գրւած է «ի 25 ջաներ (յունւար) 1823» ու մի տեսակ բօթարերն է թէ՛ տպարանի եւ թէ՛ թերթի վերահաս մահւան.

«Առ ազնիւ Պարոնայք Օժանդակի Տպարանին — գրում է Դպիրը. Պսակ պանծալի ներբողական բանից արժան է հիւսել եւ ձեռ վերընծայել ո՞վ Օժանդակ Օճանասփիւռ Տպարանին, վասն ազգասիրական եռանդեան սրտի ձերոյ, որք ճշմարտասիրաբար անխորշելի դիտա-

ւորութեամբ անյողդէյողդէ մնալով, անչէջ պահեցիք զարծարծումն սիրոյ ձերոյ մինչ ցարդ, եւ չիք տեղի կասկածանաց զի ունիք տակաւին հանապազօրդեւ յօժարութեամբ զօժանդակութիւն ձեր ի սակս պայծառաշքութեան Արամեանս գրոհի » : (էջ 1069) :

Երկրորդը՝ Կալկաթայի Հայոց շնորհակալութեան բաղմաստօրագիր թուղթն է հոգեւոր հովիւ Ղուկաս քահանայ Գէորգեանին (10 Յունւարի 1823 թ.), որը ինքը քահանան, իր շնորհակալական պատասխանի հետ, նոյն թւի Յունւարի 28-ին ուղարկում է «Շտեմարան»-ին՝ տպագրութեան համար : (էջ 1074) :

Այս փաստերը այլեւս ոչ մի կասկած չեն թողնում, որ «Շտեմարան»-ը դադարած պիտի լինի Յունւարի վերջերին եւ կամ ամենաուշը՝ Փետրւարի սկզբներին, ունենալով մէկուկէս տարուց էլ պակաս կեանք — 1821 - 1823 : Եւ ուրեմն իրաւունք ունէին թէ՛ Կալկաթայի «Ազգասէր»-ը եւ թէ՛ Սինդապուրի «Ուսումնասէր»-ը ասելու՝ «մեռեալ զաղարեցաւ ի մանկական հասակի » :

Ինքը խմբագիրն էլ իր վերջին խօսքի մէջ, շեշտելով «Շտեմարան»-ի կատարած դերը հնդկահայ կեանքում, երկու տարւայ տեւողութիւն է ընծայում նրան, բայց անշուշտ այդ երկու տարին ոչ լրիւ հասկանալով. « Ուրախ եմ ասել, — գրում է նա — որ մեր Կալկաթու փոքրիկ հասարակութեան միջումն, միջոց փոքր ժամանակումն, կամիմ ասել երկու ամաց, մեծ զանազանութիւնայ գոյացել վարուց, սովորութեանց եւ բնութեանց » : (էջ 1079) :

(Վերջը յաջորդ անգամ)

